

2. Թորոս որդի Սարգսի եւ Մարիամի, զրիչ եւ նկարիչ, որ գրած է Վենետիկի Մխիթարեանց Թ. 193 Նոր կտակարանը 1284ին ի Մուշ. ծաղկած է 1328ին Բաղէշի Աստուածաշունչը. գրած է 1330ին Բաղէշի Աւետարանը, 1331ին ի Թոնդրակս Ապահոնեաց Երուսաղէմի Թ. 95 ճառոցը, 1332ին Վենետիկի Մխիթարեանց Թ. 12 Աստուածաշունչը եւ Հալէպի Թ. 110 Աւետարանը, որուն զրչութեան տարին եւ տեղը անձանօթ կը մնայ:

3. Թորոս Տարօնեցի, զրիչ եւ նկարիչ ի Գլաձոր, որ տակաւին «սարկաւազ» 1311ին ծաղկած է Թաւրիզի Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թ. 1 Աւետարանը (Աճառեան, Յուցակ, էջ 70—72), որուն զրիչն էր Թեր, տեղը անձանօթ: Ի Գլաձոր կը յիշուի 1314ին Մխիթար Երզնկացիէն (Վենետիկ, Մխիթ. Թ. 803), 1318ին Սարգիս զրչէն (անդ, Թ. 265). կը մասնակցի 1317ին էջմ. 181 Աստուածաշունչի զրչութեան եւ ծաղկումի, 1318ին կը նկարազարդէ էջմ. 182 Աստուածաշունչը, 1321ին Բրիտ. Թանգարանի Թ. 14 Աւետարանը, 1323ին Բաղէշի Աւետարանը, 1325ին՝ էջմ. 560 եւ 1346ին՝ էջմ. 2187, ամէնն ալ զրուած եւ ծաղկուած ի Գլաձոր:

Այս զրիչ-նկարիչներէ որ եւ է զրական աշխատութիւն չէ հասած մեղի:

Ասոնց հետ համանուն է եւ համաքաղաքացի տաղասաց Թորոս Մշեցի, բայց ոչ ժամանակակից: Տաղասացս ապրած է ժամանակ մը, երբ Երզնկա եւ Տարօն կը գտնուէր Օսմանեան տիրապետութեան տակ, երբ թուրքերէն լեզուին ծանօթ եւ ընտել եղած էր հայ ժողովուրդը: Ժե. գարուն կ'իջնայ անոր ծնունդը: Ժամանակը ճշգրտու համար մեղի կուտան կ'ընծայէ տաղասացս իր «Ի մէջ մեղաց եմք մոլորեր» սկզբնաւորութեամբ տաղին մէջ, ուր կը նկարագրէ ահանատեսի աչքով Երզնկացի երկրաշարժը: Յատա՛ զր բերեմ այդ տաղէն հետեւեալ տղերը (էջ 22—23).

Ի յանդընդոց զերկիր շարժեց,
չառ չինութիւն արար աւեր.
Հանց մեծամեծ ցասումն եցոյց,
զեռ ի մեղաց չենք վախնար:
Այն Երզնկան ամուր քաղաք
խսկի չունէր անուէր ճար,
Չորսր պարխապն ի շուրջ ամեց,
բոլորսն տարաւ ի հիմն ի վար:

Հանցեղ քակեց եւ աւերեց,
երես անցուց զքաղաքն ի վար.
Անասելի մարդ կոտորեց,
յորս էր թըւով տասըն հազար...
Շատ մի սպանեց մեծ խոճանին...
կըտրճւորաք մըտօք ճարտար.
Շատ մի սպանեց կին գեղեցիկ,
ճոհար ոսկուն են պարապար.
Չամէնն յիւր տունըն խախտեց...
խսկի չեղաւ փախչելու ճար.
Խեղճ են անմեղ կաթընակերքն,
որ կու հեծեն դառն ու գիծար...
Պարոնըն զիւր քաղաքն ճրգեց,
մինչ ի Բարերթ զընաց չափաւ:

Այս շարժը, կը զրէ Յ. Քիւրտեան, «Երզնկայի բազմաթիւ շարժերէն միայն 1287ին կը համապատասխանէ» (էջ 24): Այդ շարժին համար Տարեղիւրը կը նշանակեն միայն. «Թվ. 212 (1287) շարժ եղև Երզնկան խիստ ահագին ի մայիս ամսոյն եւ բազում մարդիկ մեռան. որ զթիւն Աստուած միայն գիտէ» (Չմմառ, Թ. 328, թղ. 46ա): Բայց Թորոս Մշեցի զիտէ իր օրով տեղի ունեցած Երկրաշարժէն մեռնողներու թիւը 10000. կը շեշտէ միանդամայն, թէ այդ շարժը «զրոլոր պարխապն ի շուրջ ամեց, զբլուրն տարաւ ի հիմն ի վար»: Երզնկայի երկրաշարժներու ժամանակագրութիւնը նման շարժ մը կը յիշէ 1374ին. «Թվ. ՊԻԳ. զեկտեմբերի Ը. օրն ուրբաթ. շարժ եղև Երզնկան. եկաց ժամ մի. կարծէին թէ այլ ոչ շարժի. կրկին սաստիկ շարժ եղև. պարբապէն շատ տեղ փլաւ» (անդ): Մարդկային կորուստի մասին խօսք չ'ըլլար: Աւելի ահաւոր եղած է 1458ի շարժը. «Ձի. շարժ եղև յԵրզնկան. ԼԲԹ (կարդա՛ ժԲԹ) մարդ մեռաւ» (անդ): Այս շարժի մասին ժամանակակից մը, Սարգիս զրիչ, իրբեւականատես կը զրէ Երուսաղէմի Թ. 1490 ձեռագրին Յիշատակարանին մէջ.

«Եւ դարձեալ ի սոյն աւուրս եղև ահագին շարժ յԵրզնկան եւ կործանեաց զքաղաքն եւ գրոլոր պարխապն յառակէն տապալեց. եւ մեռան ի նմին ժամու ի շարժէն անձինք ԲԺ հազար, հաւատացեալ եւ անհաւատ, այր եւ կին, ծեր եւ տղայ եւ սրբաւնեալ քահանայք, գոր ոչ կարեմք գաղտս եւ զկսկիծ եւ զկոծ եւ զհառաչ նոցա թուել, զի ականատես եղաք անհազին պատուխալին, զոր արարիչն Աստուած մի ցուցցէ ծառայից իւրոց այնպիսի փորձութիւն եւ

վիշա: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց ըստ մարգարէին. եւ յայտ ամի էր թվական 2 եւ 2, ապրիլ ամսոյ ԻԳ, յաւուր շաբաթու կրկնադատկին, ի չորրորդ ժամու ցերեկին»: Ուրիշ յիշատակագիր մը, Ստեփանոս զրիչ, յԱւագ վանս 1464ին անդրադառնալով այս երկրաշարժին կը զրէ. «Հինգ ամաւ (յառաջ) եկաւ ահագին շարժ եւ աւերեաց զրոլոր մայրաքաղաքն զԵրզնկայ. եւ ԲԺԹ ընդ այր եւ ընդ կին ի ներքոյ հողին մնացին» (էջմ. Թ. 1309): Այս մասին արձանագրած է նաև Գրիգոր Դարանազցի իր ժամանակագրութեան մէջ. «Ձի. փլաւ Երզնկին պարխապն ի շարժէն» (էջ 5):

Այս շարժին յատկանշանականն է յանկարծակաւը, 12000 մարդկան կորուստը եւ պարխապին փլուզումը, կէտեր սրոնք ճշդիւ կը համապատասխանեն Թորոս Մշեցւոյ նկարագրութեան:

Այսպէս ճշգրտով «ի մէջ մեղաց ենք մոլորեր» տաղին զրութեան ժամանակը 1458, կ'ունենանք Թորոս Մշեցւոյ կենսագրութեան համար որոշ թուական մը, որմէ յառաջ ծնած եւ յետոյ վախճանած է: Այս շրջանէն ծանօթ է Թորոս վարդապետ մը, որ աշակերտած է Յովհաննէս Համէնցւոյ († 1497) յԱւագ վանս եւ որ յետոյ գաւազանի իշխանութիւն տուած է Տարօնեցի Գրիգորի, որ աշակերտած էր Համէնցւոյ անոր կեանքի վերջին տարիներուն. Առաքել Դաւրիթեցի կը զրէ. «Յովհաննէս Համէնցւոյն. նորին աշակերտ՝ Թորոս. նորին աշակերտ՝ Գրիգոր Տարօնեցի» (440—442), զժբախտաբար չէ նշանակուած Թորոսի հայրենիքը: Այս շրջանէն ինձի ծանօթ է Թորոս արեղայ զրիչ մը յԱմասիա (էջմ. 370, թղ. 3ա) եւ համանուն արեղայ մ'ալ 1465ին յԵրուսաղէմ (Նօտարք 221), երկուքին ալ հայրենիքը անյիշատակ: Եթէ Թորոս վարդապետ աշակերտած է Յովհ. Համէնցւոյ Աւագ կամ Կայիփոսի վանքերու մէջ, կարող էր ի մերձուտ ականատես եղած ըլլալ Երզնկայի շարժին:

Թորոս իր տաղերու մէջ կոչած է ինքզինքը պարզապէս «Գրի Թորոս», իսկ տաղերու վերնագիրներու մէջ «Թորոս Մշեցի», անպամ մը նաև «Տարօնեցի»: Չկայ որ եւ է ակնարկութիւն իր վիճակի մասին, արեւա՞յ էր, վարդապետ թէ երէց: Տաղերու

կրօնաշունչ տողերը ենթադրել կու տան զինքը եկեղեցական:

Իր ստեղծագործութիւնները մերկ են աւելնէ, շարադրութիւնը անոճ, լեզուն՝ ուսմակաւան, մաքրը՝ անգոյն: Կ'երեւայ, թէ կարգացած է իմաստասիրական զրքեր, աշակերտած է ժամանակակից մէկ վարդապետի. բայց ձեռք չէ կրցած բերել մեծ իմաստութիւն:

Իր տաղերու թիւն է Եօթը: Այդ տաղերէն հինգը հանած է Յ. Քիւրտեան իր սեպհական երկու Տաղարաններէ, զրուած 1661 եւ 1678—1681 տարիներուն: Կան տաղեր, որոնք կը տեսնուին 1625ին զրուած Տաղարանի մը մէջ, սեպհականութիւնն եղած է Շաւարշ Վ. Սահակեանի (Եւզոկիա):

Այս տեղ պիտի ներկայացնեմ Թորոս Մշեցւոյ տաղերու թիւը, աորնթեր նշանակելով այն տեղիքները, ուր կը գտնուին անոնք եւ կամ հրատարակուած են *:

1. Երկ վասն աղահոթեան ի Թորոսէ:

- Աղտեղեցայ խաւար մեղօք,
- քան զկին պոռնիկըն Բախարու 4.
- Մոռացայ գուխան աստուածեղէն
- վասն մեղաց 'ւ անչափ շարու... 4.
- Գիրի Թորոս մըտօք յիմար,
- քեզ գատաստան կոյ 'ւ օր մահու.
- Ի յայնմ անկէ հրատարակին
- ի՞նչ շատ համար ունիս տալու:

Խորագիրը W 988 ունի «Ասացեալ ի Թորոսէ Մշեցւոյ Աղահոթեան. այրոց քարոզեմ եւ ես ոչ անեմ»: E «Ի Թորոս Մշեցի տաղ...»:

= Չեռագիրք K 1, 50ա—52բ: E. 395, 33ա: W. 988, 176բ—177բ (վերջին 26 տողերը կը պահուին, թուղթ ինկած ըլլալով: Հրտ.՝ Քիւրտեան, 24—27:

2. Տաղ վարդի եւ Պլուզի 6

Երբ քաֆուր վարդըն փըթըթի,
Մբաիկ արէք այն պըլպուլին.
Չտերեւն արեր իւրըն վըրան,
գորըն կենայ ի վրայ վարդին 6...:

* Կը կիրակեմ հետեւեալ համատարակերը.
E=Երեւան, Պեմ. Թանգարան:
H=Հոյեղդ:
K 1 եւ 2=Քիւրտեան, 1661ին եւ 1678ին զրուած Տաղարանները:
W=Վենետիկի Մխիթ. Մատենադարան:
4 KW արախաւ E ուրախու. պէտք է ուղղել Թորոսի:
5 W չունի խորագիր:
6 K յորտին: H վարդին վըրան:

Վ. Թորոս գովէր զվարդն ու զլուրդուն,
որ ի սիրուն դամ կու քաշին.
Զինչ հողածին կայր արարածս,
որ չէր զիպեր այն պալային 7:

= Զեռագիրք՝ Երուսաղէմ Թ. 3052:
Բերլին 84, 127բ—130ա (Ժէ): W. 398,
22բ—24բ:

Հրա. Քիւրտեան, 42—44: Հայերգ
116—118:

3. Տաղ ի վերայ հողոյ ասացեալ:

Ի մէջ մեղաց եմք մոլորեր,
յաստընդորիս կու գործեմք չար.
Այլի զԱստուած բարկացուցաք,
որ սրբաին եկեր զիծար...

Վ. Զայնչավի չարիքը որ կու նայիս
զերի Թորոս մըտօք յիմար.
Գրնա լալով խոստովանեց,
լեզուով արէ զմեղքը ի խրատ:

= Զեռագիրք. K. 2. 71բ—72ա. Մոսկ-
ուան, էջ 212—215:

Հրա. Քիւրտեան, 22—23:

4. Պատմութիւն վասն ԺԲ Հողմից. զոր
ասեմք ի սակաւ մտացս զոր լուաք փոքր ի
չատէ աստուածային գրոցն, որ ելանեն ի
չորրորդ հրեշտակաց. վասն երգողացն ասա-
ցաւ ի Թորոսէ:

Ի յետ ստեղծմանն արարածոց,
որ զոյացոյց զայս ամենայն,
Օղոց կտուր իշխանութիւն
հողմ ու քամու արար սահման...

Վ. Թորոս պատմէ զպղնիւ հողմունքը,
որ են թրով երկոտասան...
ով որ քամուն յիչոցք ասէ,
նա զ(երգ) Կայէն եղբայրսպան:

Խորագիրն K. ունի «Պատմութիւն ԺԲ
հողմոց, ասացեալ ի Թորոսէ:

= Զեռագիրք՝ K. 1. 52ա—54ա: E.
395, 34ա: էջմ. 1636, 145ա (ԺԲ):

Հրա. Քիւրտեան, 35—39:

5. Ոտանաւոր վասն դատաստանին ա-
ւուրն հատուցման, չարեացն զչար եւ բարե-
գործացն՝ զբարիքն, որ վկայէ սուրբ Աւե-
տարանն. արարեալ ի Թորոսէ 8:

Յորժամ տարերբքն զըզըրդին,
երկինք 'ւ երկիր խոնարհանան,

Եւ կատարին կեանք եղելոց,
որ արարածքս հիանան...

Վ. Թորոս յիչէ զօրն անաղին,
երբ ժողովին ի դատաստան,
Ի յայնմ անեղ հրապարակին,
ո՞ւր է լեզու կամ պատասխան:

= K 1, 41բ—48ա: E. 395, 57ա—62ա:
W. 988, 178ա—182ա (սկիզբէն չորս տուն
պակաս):

Հրա. Քիւրտեան, 27—35:

6. Տաղ երկու ազգ լեզուէ ի Թորոս
Մշեցոյ ասացեալ:

Է եէրի կօկի քարատան,
եէրի կօկտան քարատան,
Զհողն ի ջրոյն բաժանեցեր
եւ ի վերայ ջուրցըն նրատար.
է սան մի սան քարիմ՝ ուհիմ,
եէտու կօկա այեան պախար...

Վ. Գերի Թորոս մըտօք մոլոր,
մեղօք զարձեր ես կունահար
Կէճա կունտուղ զաՖիլ օլմա.
աչ կօղընկի հախայ եալ վար:

Խորագիրը W. 344 ունի «Ի Թորոսէ
Տարօնեցոյ ասացեալ է»: E. Երուսաղէմ
3057 տաղ ի Թորոսէ Մըշեցոյ ասացեալ:
Անտ. 125 «տաղ երկու ազգ լեզուէ»:

= Երուսաղէմ 3057: E. 395, 52ա -բ:
Չմմա, Անտ. 125, 144բ (Ժէ): Շաւարշ Վ.
Սահակեան 1. էջ 162—164 (1624): W.
344, 38ա: 671, 15ա (սկիզբէն մէկ տող պա-
կաս խորագրին հետ):

Հրա. Քիւրտեան, 45—46: Բաղմալէպ
1910, էջ 281 (առաջին 10 տողերը. ըն-
ծայուած Թաթոս Թոխաթեցոյ, հմմտ.
Հանդ. Ամս. 1910, էջ 285):

7. Վասն կատարածի աւուրն զոր Զե-
րօնիմոս եզիտ ի Պատմութեանցն Հրէից.
ԺԲ. նշան որ լինելոցն է զկնի պիղծ Նեոին:

Քեզ ծանուցից, եղբայր, լըսէ,
որ լինելոց է յետ Նեոան.
Նախ քան զպալուտըն Քրիստոսի,
որ զայ փառօք ի դատաստան,

Վ. Այս փոփոխումն է որ յայտնի,
երկինք 'ւ երկիր նոր կերպարան,
Որ գանցելոցըն ցուցանէ,
յայտնէ զայժմոյս եւ զպագայոյն:

Խորագրին մէջ K. 1 չունի «զոր Զե-
րօնիմոս եզիտ ի պատմութեանցն Հրէից.
ունի W:

7 W վերջին տողն ունի մեղքն թողած է Թո-
րոսն եւ լրացուցող ամենին:
8 Խորագրին՝ E. ի Թորոս Մշոյ ասացեալ է:

= K 1, 48ա—50ա: W. 988, 182ա—
183բ (1706):

Հրա. Քիւրտեան, 39—41:

Երկու ձեռագիրներու մէջ ալ անա-
նուն, Wի մէջ կը յաջորդէ Թորոսի «Յոր-
ժամ տարերբքն զըզըրդին» տաղին: Ճիշդ
նկատած է Յ. Քիւրտեան, թէ «վատահօրէն
իրն է նաեւ այս տաղը, որ ոչ միայն նոյն
ոճը ունի, այլ եւ մեր այս ձեռագրին մէջ
յետեղուած է Թորոսի տաղերուն մէջ»
(անդ 39):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՒՆՈՒՅ ՀՈՅԵՐԻՆՆՆ ԶԵՌՈՒԳՐԱՅ Ի ԲՈՒԼԳԱՐԻՈՅ

ՎԵՑՀԱՋԱՐԵԱԿ ՓՈՔՐԻԿ Ի ՊԼՈՎԴԻՒՒՅ

ԹՈՒՂԹՐ՝ 14: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 22: 1/2 X 16 սմ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկաթ, իւրաքանչիւրը՝ 17 X 5 սմ.
առնուած կարմիր շրջագծերու մէջ: — ՏՈՂԹ՝
26—27: — ՆԻԻԹ՝ բուրբ պինդ եւ ողորկ: —
ԿԱՋՄ՝ կարուած՝ տետրակի ձեւով: — ՄԱԳԱՂԱ-
ԹԵԱՅ ՊԱՋՊԱՆԿԻ՝ չունի. սկիզբն ու վերջը մէկա-
կամ պարագ բուրբ՝ որպէս պահպանակ եւ կողմ:
— ՀԱՆԳԱՄԱՆԻ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտրագիր, մանր
ու գեղեցիկ, սեւ մեկանով: Սկզբնագիրք՝ կարմիր
մեկանով: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 4, 7ա, 8բ, 9—14: —
ՆԿԱՐԿ՝ չունի: Ունի արեգակնացոյց սիրուն շրջա-
նակ մը՝ գծուած (քղ. 6ա): — ԼՈՒՍԱՆՅԱՋԱՐԿԻ՝
չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1825: — ԳՐԻՉ՝ Պետրոս զպիր
ՏԵՐԵԱ Ստեփանեան Ազրիանուպոլսեցի: — ՏԵՂԻ՝
Ֆիլիպէ (Պլովդիւ): — ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԻ՝ քղ.
1ա: — ՍԵՓԱՎԱՆՈՒԹԻՒՆ՝ անձնակազմ. ստացած
եմ վերջերս նուէր՝ Պլովդիւի Տ. Վաղինակ Ա. ֆի.
ՏԵՐ Միմասեանէ:

Մատենա է՝ «Տետրակ որ կոչի՝ վեց-
հազարական: Եւ ըստ Հոլովաց արեգակն».
անաւարտ: Կը բովանդակէ.

Թղ. 1բ. «Այլը խրատք ըստ Հոլովաց
արեգ. ո՞վ պատուական եղբայր զիտացեր
զի արեգակն բարձրանայ յայբէն մինչեւ
ցըքէն, եւ խոնարհի ի քէյէն մինչեւ ցայրն.
զի յորժամ բարձրանալ սկսանի յամէն օր
հօլով մի բարձրանայ, եւ բն աստճան եւ
Վ ասպարէզ...»:

Թղ. 2ա—3բ. Արեգակնացոյց աղիւ-
սակք. Խոյ, Յուլ, Եկաւոր, Խեցգետին,
Առիւծ եւն եւն. Մարտէն մինչեւ փետր.
ամիսներ...:

Թղ. 5ա. «Այբէն մուտ արա՛ չուրջն՝
այրուբէն քէն լո զիբն եւ են այսօրիկ, է
ձայնաւորաց ամէն...»:

Քերականութիւնս որ կոչի՝ է գրեանք
զուգեալ ի Դաւիթ անագթ փիլիսոփայէ, եւ
ի Հոսթ վարդապետէ որ կոչի անուն Փը-
նիկ: ա, ե, է, ը, ի, ո, ւ. եւ են այսօրիկ
զողին այսպէս բանս զմիտս...:

Թղ. 6բ. «...Այս արուեստս զս
(=6000)եակին է զոր գովեց Անանիա չիբի-
կուանցին եւ ասաց դանձ թագուցեալ է ի
տունն Թորգոմայ զի մայր է սա ամենայն
իմաստութեան՝ այս է թուոց աղբիւրն ա-
մենայն իմաստութեան հանդերձ ամենայն
արանամամբ (այսպէս), եւ զի տեսին զսա
ճարտարքն յունաց ի մերում... (անաւարտ
ձգուած):

Թղ. 7բ—8ա. այրուբենական աղիւ-
սակք:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ: Թղ. 1ա «Տետրակ որ կոչի՝
վեց հազարական, եւ ըստ Հոլովաց արեգակն:
Զեռամբ Անդրիանուպոլսեցոյ Հանգուցեալ Տէրեա
Ստեփանեան վրժոյ իւր արցւ. Պետրոսին: 1825.
11/25, ի Ֆիլիպէ»:

ՆԱՆՕԹՈՒԹԻՒՆ: Զեռագրիս զրիչ Պետրոս զպիր
Տէրեա Ստեփանեան Ա. Պոլսեցի գրած է ի Պլովդիւ-
նակ «Ստորագրութիւն Ս. Գէորգ Եկեղեցոյ»
1828թն՝ (տես «Ցուցակ»ին Թ. 12 ձեռագիրը, Հանդ.
Ամս. 1938, էջ 211—214), եւ իւղարեբեց Աւետարան
մը՝ 1834թն՝ (տես՝ անդ, Թ. 22 ձեռագիրը, Հանդ.
Ամս. 1940, էջ 245—246):

ՆԵՐՍԵՍ ԳԱՍՏՊԵԱՆ

ՄԸՀՈՒՆ ՀՈՒՆԶՔԸ ՀՈՅԵՐԻՍԵԱԿԸ ԳՆՇԻ ՎՐԱՅ

1938—1946

Ցաւով կը նշանակենք անունները այն
հայագէտներու եւ արեւելագէտներու, որոնք
վախճանեցան յընթացս վերջին 8 տարիներու:
Զենք առներ ցանկիս մէջ այն հանգու-
ցեալները, որոնց մասին անկատար են տա-
կաւին մեր տեղեկութիւնները:

Richard Vasmer, մասնագէտ իւրա-
մական գրամագիտութեան: Ծն. 22 հոկտ.
1888, Պետերբուրգ. † 21 փետրուար 1938,
Կենդրոնական Ասիա:

Իր աշխատութիւնն է. «Հայաստանի
ոստիկաններու ժամանակագրութիւնը 833—